ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 27.09.2023թ.

ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ — Ս. Մինասյան

Անդամներ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի օգնական — Խ. Խաչատրյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական — Թ. Կարապետյան

քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի ավագ իրավաբան — Գ. Շերոյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու — Ա. Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ — Ն. Մկրտչյան

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2023 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 14:00-ին, էլեկտրոնային եղանակով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները /անվանումը և էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը/:

N	Մասնակցի անվանումը	հեռախոսահամար	Էլ. փոստի հասցե
1	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ	+374 60 771 111	info@mts.am
2	«Արփինետ» ՍՊԸ	+374 60 888 888	armen.muradyan@arpinet.am
3	«ՔրոսսՆեթ» ՍՊԸ	015 500 500	cross@cross.am

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ներկայացվել են.

- Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N 1-ի
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը հավելված N 1.2-ի, ըստ անհրաժեշտության

- Գնային առաջարկ՝ հավելված N 2-ի,
  Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություն, մասնավորապես.

2.3 «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է տնօրենի կողմից հաստատված լիազորագիրը:

2.4 «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ գնային առաջարկին կից գնացուցակում կա թվաբանական գումարի անհամապատասխանություն:

2.5 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետի՝ Հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և գնումների համակարգողի կողմից 25.09.2022թ. ծանուցել մասնակիցներին և առաջարկել է 1 /մեկ/ աշխատանքային օրվա շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.6 «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով գնման գործընթացի հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հայտում բացակա փաստաթուղթը:

2.7 «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շտկված գնացուցակը:

2.8 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

19.09.2023թ. ստացվել են հարցադրումներ և դրանց վերաբերյալ 20.09.2023թ. տրամադրվել պարզաբանումներ հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը տեղադրվել www.gnumner.am էլեկտրոնային կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Հ/Բ	Ծառայության Անվանումը	Մասնակիցների անվանումը	Գնման գինը (միավոր գների հանրագումարը)	ՀՀդրամ	
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին
1	հանրային հեռախոսային ծառայություններ	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ	2340	1 744.16	2 093
		«Արփինետ» ՍՊԸ		1 950	2 340
		«ՔրոսսՆեթ» ՍՊԸ		1 942	2 330

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5. «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Գնման հանձնաժողովը որոշեց.

5.1 Ընտրված մասնակից ճանաչել **«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ին:**

5.2 Հաստատել «ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-24/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5.4 Պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում նախատեսված ծառայությունների գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում՝ նախատեսված ծառայությունների գնման գնի 15(տասը) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ս. Մինասյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Խ. Խաչատրյան	ԳՊ/ԳԱ
	Թ. Կարապետյան	ԳՊ/ԳԱ
	Գ. Շերոյան	ԳՊ/ԲԱ
	Ա. Մարգարյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	ԳՊ/ՄՀմ